քից հինգը մարում են մամերը, որոնք լիմար են համարում։

Զատիկ: Մի առանձին բան չի կատարում, միայն մի շաբաթ շրջում են միմեանց տները և ներկած հաւկիթներով շնորհաւորում Զատիկը, իսկ հետևեալ օրը՝ մեռելոցին բոլորը գնում են գերեզմանատուն իրենց ննջեցեալների գերեզմաններն օրհնել տալու։ Այդ օրն աղքատներին գաթայ կամ ձու են բաժանում։

Համբարձում: Զահիլների ուրախութեան տօնն է այդ, որ տօնում են երկու օր։ Երեքշաբթի գաթայ են թխում, ձու ներկում, սեր պատրաստում և Չորեքշաբթի առաւօտեան ջահել հարսներն ու աղջիկներն արշալոյսին խմբեր կազմած միասին գնում են Ծաղկախաշը. դա գտնըւում է Նամակերտի և Ղառղունի մէջտեղը. այդտեղ միմեանց շնորհաւորում են Համբարձումը և միասին զբօսնում, ուտում են տարածները, և մինչև կէսօր ուրախանում են, երգում, պարում և ապա դաշտից գոյնզգոյն ծաղիկներ քաղում, փնջեր կազմում և խմբովին վերադառնում են գիւղ։ Ծեր կանայք նրանց ընդառաջ են գալիս ու ճանապարհի վրայ շարքով նստում, և երբ հարսներն ու աղջիկները մօտենում են՝ ծաղկեփնջերը կանանց են տալիս և շնորհաւորում Համբարձումը, նրանք էլ օրհնում են.

—«Աղջկերք, դուք էլ էս ծաղիկների նման բացուէք, ծլէք, ծաղկէք, կանաչէք»։

Այնուհետև վերադառնում են գիւղ։ Երեկոյեան հաւաքւում են մի տուն և ծաղկեփնջերը խաչաձև դնում մի մաղի մէջ, իսկ մի կճուճի մէջ էլ մի ափ աւազ են լցնում և շուրջը մետաքսէ թաշկինակով զարդարում. ապա հաւաքում են աղջիկներից զանազան մանրիկ իրեղէններ (բանալի, մատանի, կոճակ, ուլունք, օղ) և գցում կճուճի մէջ։ Հետևեալ առաւօտ, Հինգշաբթի, աղջիկները նորից հաւաքւում են կճուճի շուրջը. մի փոքրիկ աղջկայ գլխին ձգում են մի քող, հարս դարձնում, նստեցնում իրենց շրջանի մէջ և վիճակի կճուճը դնում նրա գիրկը. նա ամեն մի անգամ